ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 50

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26-ը փետրվարի 2021թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 33-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար **Մ. Ս. Աթոյան/**
2. ԵՊՀ ԻՄ 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Ց. Դավթյան/**
3. ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների 2019-2020թ. կարծիքների վերլուծության մասին: /Զեկուցող՝ **Է. Հ. Ղարայան /**
4. ԵՊՀ ԻՄ-ի վարչական, ակադեմիական աշխատակազմերի և ուսանողների համար էթիկայի կանոնագրքի հաստատում: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ա. Ճաղարյան/**
5. Ընթացիկ հարցեր:

ԵՊՀ ԻՄ-ում դրամաշնորհի հատկացման նպատակով մրցույթային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան**/:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց:

Բաց քվեարկությամբ՝ 33 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**

Որոշում՝ 50/1

- Հաստատել նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u> ՝ «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը: Նա նշեց, որ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի գիտխորհրդի նիստերի ժամանակացույցի նախագիծը բխում է ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագիրից, խորհրդակցել է ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումների ղեկավարների հետ: Մասնավորապես նախատեսված է հաշվետվություն ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-ի (2015-2020 թթ.) վերաբերյալ, վերանայել ԵՊՀ ԻՄ-ում գործող որոշ կարգեր և կանոնակարգեր, ինչպես նաև այլ իրավական ակտեր, նախատեսված է լսել որոշ ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, այդ թվում նաև ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ-ի հաշվետվությունը, որը նախատեսվում է իրենց իսկ կանոնադրությամբ, մայիսին նախատեսված է լսել «Ակունք» գիտամեթոդական հանդեսի գործունեության մասին: Նշվեց, նաև որ հետագայում հնարավոր են որոշակի շտկումներ ԵՊՀ ԻՄ-ի ժամանակացույցի հաստատումից հետո, եթե

իհարկե, լինեն Մասնաճյուղի համար էական հարցեր կապված ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ի նոր ՌԾ-երի հաստատման հետ:

Արտահայտվեցին – Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը և Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան Մ. Զաքարյանը - առաջարկվեց հաստատել գիտական խորհրդի 2020-2021՝ ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 33 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

ՈՐՈՇՈՒՄ 50/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2020-2021՝ ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի երկրորդ</u>՝ «ԵՊՀ ԻՄ 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք 13 անվանական կրթաթոշակ, որից 10-ը ԵՊՀ ԻՄ բյուջեի հաշվին, իսկ 3-ը՝ արտաբյուջետային միջոցներից: 3

արտաբյուջետային անվանական կրթաթոշակների համար ներկայացվել են՝ Վազգեն Սարգսյան անվանական կրթաթոշակի համար՝ Դիզայն 3-րդ կուրսի ուսանողուհի Մետաքսե Սարգսի Մելյանը և Մոնթե Մելքոնյան անվանական կրթաթոշակի համար՝ Արայիկ Գառնիկի Շահնազարյանը: Ա. Դավթյանը նշեց, որ ունենք նաև Իջևան քաղաքի անվան կրթաթոշակ՝ Իջևանի համայքապետարանի հովանավորությամբ, խոստացել են որ կլինի ֆինանսավորում, լինելու դեպքում կներկայացնենք թեկնածուին, ԵՊՀ ԻՄ-ի անվանական կրթաթոշակների համար ներկայացվել են 9 հոգի: Նշվեց, որ անվանական կրթաթոշակի հատկացման հարցը համաձայն գործող կարգի քննարկվել է ֆակուլտետների գիտխորհուրդներում, այնուհետև ներկայացվել է Ուսումնամեթոդական վարչություն, վարչությունը ստուգել է թեկնածուների տվյալները, արդյունքը քննարկվել է տնօրենության նիստում, և արդյունքում անվանական կրթաթոշակի արժանացել են հետևյալ ուսանողները. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 4-րդ կուրսի ուսանողուհի Միլենա Համազասպի Մելիքսեթյանը՝ Դավիթ Անհաղթ, Պատմություն 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Հրայրի Խուդավերդյանը՝ Մխիթար Գոշ անվանական կրթաթոշակների համար: ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացված 11 անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների ցուցակը՝ տես հավելված 2-ում:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը առաջարկեց հաստատել 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 32 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 50/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

<u>Օրակարգի երրորդ</u> ՝« ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների 2019-2020թ. կարծիքների վերլուծության մասին›› հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ արտաքին կապերի բաժնի աշխատակից Է. Ղարայանի հաղորդումը։

Էրինե Ղարայանը մասնավորապես նշեց, որ հարցմանը մասնակցել են մարզի խոշոր կազմակերպությունների (բանկերի, դպրոցների, հյուրատների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների) ղեկավար անձինք՝ **69 շահակից**: Հարցումն անցկացվել է առցանց: Հարցման մեջ ընդգրկվել են շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությանը, տեսական գիտելիքների իմացությանը, գործնական հմտություններին և մասնագիտական ընդհանուր կարողություններին վերաբերող հարցեր: Հետազոտության արդյունքներն ընդհանուր առմամբ բարձր են և գոհացուցիչ, ինչը փաստում է, որ Մասնաճյուղը կատարել է և շարունակում է զարգացնել իր առջև դրված գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը, այն է՝ աշխատաշուկային տալ բանիմաց և մրցունակ մասնագետներ: Արտաքին շահակիցները բարձր են գնահատել մասնավորապես մեր շրջանավարտների

կազմակերպչական կարողությունները, աշխատանքային պատասխանատվությունը, թիմային աշխատանք կատարելու ունակությունները, գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողությունները, վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը և այլն: Հետևելով արտաքին շահակիցների կարծիքներին ու բարելավման առաջարկներին՝ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել մեր շրջանավարտների մասնագիտական խոսքին, գործնական հմտություններին, քննադատական մոտեցմանը, ինքնավստահությանը, ինքնազարգացման ձգտմանը, նախաձեռնողականությանը, արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողություններին:

Է. Ղարայանի հաղորդումը ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 3-ում:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանը,** ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Գ. Սիմոնյանը**, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Գ. Հովհաննիսյանը**, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ **Մ. Միքայելյանը** և այլոք:

Մասնավորապես առաջարկվեց վերլուծությունն ուղարկել համապատասխան ստորաբաժանումներ, ամբիոններ, մասնագիտությունների կրթական ծրագրերի ղեկավարներին՝ կրթական ծրագրերը վերանայելիս արտաքին շահակիցների կարծիքներն ու առաջարկությունները ներառելու և որոշ շեշտադրումներ փոխելու նպատակով:

Որոշեցին.

Որոշում 50/4

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի չորրորդ</u> **՝** «ԵՊՀ ԻՄ-ի վարչական, ակադեմիական աշխատակազմերի և ուսանողների համար էթիկայի կանոնագրքի հաստատում» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանի** հաղորդումը(Մ. Ճաղարյանը հարգելի պատճառով չկարողացավ տվյալ պահին մասնակցել նիստին)։

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը մշակել և գիտխորհրդի քննարկմանն է ներկայացրել «Էթիկայի կանոնագիրք», որը նորմատիվ իրավական ակտ է Մասնաճյուղի վարչական և ակադեմիական (պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ) աշխատակազմի և ուսանողների համար և սահմանում է ԵՊՀ ԻՄ-ում աշխատակիցների և ուսանողների էթիկական վարքագծի սկզբունքները, իրավունքներն ու պարտականությունները և կարգապահական տույժերը։ Կանոնագիրքը կազմվել է հիմք ընդունելով ՀՀ սահմանադրությունը, «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը, «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի» ծրագրի դրույթները , Մասնաճյուղի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները։ Նրա կիրառելիությունը պետք է ապահովվի Մասնաճյուղի համապատասխան կանոնակարգերի և ընթացակարգերի միջոցով։ Ակադեմիական անազնվության կանխարգելման և դրա դեմ կիրառվող տույժերը մշակվել են դասախոսների և ուսանողների հետ հանդիպում-քննարկումների ժամանակ նրանց կողմից կատարված առաջարկությունների հիման վրա։ Էթիկայի կանոնագրքի նախնական տարբերակը քննարկվել է նաև ամբիոններում, վարչական ստորաբաժանումներում, ուսանողական խորհրդում, ապա առաջարկություններով տարբերակը խմբագրել է Մասնաճյուղի իրավախորհրդատուն։

Կանոնագրքի նպատակն է խրախուսել և ապահովել բարոյաէթիկական մշակույթը, մասնավորապես ակադեմիական ազնվության մշակույթը Մասնաճյուղում գործունեություն ծավալող պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ և ուսանողական կազմում, զարգացնել նրանց մոտ բարոյահոգեբանական, գիտամանկավարժական և կազմակերպական հիմունքները, ստեղծել միջանձնային բարենպաստ փոխհարաբերություններ՝ բարձրացնելով դերակատարների հեղինակությունը, պահպանել Մասնաճյուղի ամբողջականությունը և բարի համբավը՝ բարձրացնելով բուհի մրցունակությունը ներպետական ուսումնական հաստատությունների շրջանակներում, էթիկակային, մասնավորապես ակադեմիական ազնվությանը վերաբերող հարցերին տալ համապատասխան լուծումներ: Էթիկայի կանոնների և նորմերի պահպանմանը հետևելու և դրանց խախտման դեպքերում առաջացած խնդիրները լուծելու է էթիկայի հանձնաժողովը, որի գործունեության ժամկետի և կազմի հաստատումը, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրականացվելու է ԵՊՀ ԻՄ խորհրդի կողմից: Էթիկայի հանձնաժողովը բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելու է համաձայն այս կանոնագրքի, Մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնների և համապատասխան կանոնակարգերի:

<u>Արտահայտվեցին</u> – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանը**, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ **Գ. Հովհաննիսյանը**, ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար **Մ. Աթոյանը**, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Գ. Սիմոնյանը** և այլոք:

Արտահայտվողները կարևորեցին այս փաստաթղթի առկայությունը, կարևորեցին կանոնագրքում նշված նորմերի պահպանումը և իրականացումը ինչպես ԵՊՀ ԻՄ աշխատակիցների այնպես էլ ուսանողների կողմից, կարևորվեց նաև հաջորդ գիտխորհրդի նիստին հաստատվելիք էթիկայի

հանձնաժողովի կազմի օպտիմալ ձևավորումը, նշեց, որ լավ կլիներ այս փաստաթուղթը համառոտ բրոշյուրի տեսքով լիներ բոլորի մոտ։

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 50/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի վարչական, ակադեմիական աշխատակազմերի և ուսանողների համար էթիկայի կանոնագիրքը՝ համաձայն հավելված 4-ի։

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ընթացիկ հարցեր՝

Լսեցին՝ «ԵՊՀ ԻՄ-ում դրամաշնորհի հատկացման նպատակով մրցույթային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Ա. Մակարյանը մասնավորապես նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվում ԵՊՀ ԻՄ-ում դրամաշնորհների հատկացման մրցութային հանձնաժողովի կազմը, որտեղ որպես հանձնաժողովի նախագահ ընդգրկված է «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավար, ք.գ.թ., դոցենտ Հովսեփ Մովսեսյանը, որպես քարտուղար՝ կենտրոնի մասնագետ Տիգրան Ղուշչյանը: Ֆակուլտետներից ներկայացվել են հանձնաժողովի անդամների

հետևյալ թեկնածուները՝ Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ Վահան Աղաբաբյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ Վաչագան Ավագյանը, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, տեխն. գ.թ., դոցենտ Ռոբերտ Յոլչյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տնտ. գ.թ., դոցենտ Գարիկ Սիրոյանը:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 50/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում դրամաշնորհի հատկացման նպատակով մրցույթային հանձնաժողովի կազմը համաձայն հավելված 5-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ